

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻց ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՐՄԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի «Հայոց պատմություն» (Հեղինակներ՝ Սմբատ Խ. Հովհաննիսյան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալա Խառաւոյան, բանասիրական գիտությունների թեկնածու, Զարուհի Հակոբյան, արվեստագիտության թեկնածու: Սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան, ձեռավորողներ՝ Նորա Գալֆայան, Մանե Արշալույսյան, նկարիչ՝ Դավիթ Մինասյան, «Մասնակցային դպրոց» ԿՀ, Երևան, 2024, 112 էջ) դասագրքի վերաբերյալ

2024 թ. մայիսին ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նոր դասագրքերի փորձարնությունը կազմակերպելու նպատակով փորձագետների ցանկ էր ուղարկել ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունք: Բաժանմունքին վերապահված էր միայն համակարգողներ նշանակելու իրավասություն:

2024 թ. մայիսի 13-ին փորձագիտական կարծիքներն ուղարկվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարություն: Դրանք ներկայացնելու վերջնաժամկետ էր նշանակվել 2024 թ. մայիսի 20-ը: Որոշ ժամանակ անց մամուլի հրապարակումներից պարզ է դարձել, որ ՀՀ ԳԱԱ ուղարկած կարծիքները զուտ տեխնիկական պատճառներով չեն ընդունվել. դրանք չեն արվել գնահատման սանդղակին համապատասխան: Իրականում գնահատման այդ սանդղակը փորձագետներին չի տրվել: Բանն այն է, որ ԿԳՄՍ նախարարությունն իր նամակագրությունը բացառապես իրականացրել է ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի հետ, իսկ վերջինս էլ, ինչպես պարզվեց, թյուրիմացարար ձեռնմուշը գրախոսներին չի տրամադրել՝ ենթադրելով, որ նրանք ձեռնմուշի օրինակն ունեն: Տրամաբանութեն նախարարությունը փորձագիտական ցանկի հետ մեկտեղ պարտավոր էր գնահատման սանդղակն ուղարկել փորձագետներին:

Կարծիքն ըստ ձեռաշաբի ներկայացնելու համար՝ ժամանակ տրամադրելու վերաբերյալ բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի մայիսի 18-ի խնդրանքը, նախարարությանը մերժել է: Հավելենք, որ կարծիքների ընդունման ժամկետի ավարտին կար ևս 2 օր:

Նախարարության պատասխանատուների պնդմամբ ամբողջ գործընթացն արվել է հույժ զաղտնի պայմաններում:

2024 թ. մայիսի 22-ին ԿԳՍՍ նախարարությունը նամակով տեղեկացրել է ՀՀ ԳԱՍ-ին, որ ներկայացված կարծիքներն անընդունելի են, քանի որ ընթացակարգին համապատասխան գործընթաց չի իրականացվել: Սա այն դեպքում, եթե, կարծիքներն ուղարկվել են վերջնաժամկետից՝ մայիսի 20-ից 7 օր առաջ: Նախարարությունը գրեթե մեկ շաբաթ ժամանակ ուներ (մայիսի 13-20-ը) տեղեկացնելու, որ կարծիքները ձեռնմուշի համաձայն չեն արված, որից հետո փորձագետներն ընդամենը 1-2 ժամում այն կարող են ուղղել: Հանուն կրթության կարելի եր նման քայլի գնալ:

Որոշ ժամանակ անց հայտնի է դարձել, որ դասագիրքն, այնուամենայնիվ, չի երաշխավորվել և կրկին ուղարկվել է փորձաքննության: Ի դեպք, դասագիրքը չի երաշխավորվել նաև այդ անգամ:

Վերջապես, 2024 թ. հուլիսի վերջին նշյալ դասագիրքն արդեն երաշխավորված տեղադրվել է համացանցում: Պատասխանատուների հավաստմամբ դասագրքի հեղինակի և «Մասնակցային դպրոցի» ղիմուտի հիման վրա նրանց տրամադրվել է երկրորդ փորձագետի կարծիքը: Այդ կարծիքի հիման վրա դասագրքի հեղինակները «կատարել են շտկումներ», որից հետո ուղղված տարբերակը ներկայացվել է նախարարություն և ապա՝ հաստատվել:

Երաշխավորված դասագիրքը համեմատելով մեր կարծիքների հետ, պարզել ենք, որ «զարմանալի» ճշտությամբ ու զուգադիպությամբ մեր դիտողությունների մի զգալի մասը նոր տարբերակում շտկվել է, սակայն, անգամ այդ պարագայում, նույն դասագրքում մնացել են բազմաթիվ սխալներ, կոպիտ բացթողումներ, աղավաղումներ, որոնց պարագայում այս նոր տարբերակը ևս ենթակա չէ դպրոցներում որպես դասագիրք գործածման:

Դասագրքի նոր տարբերակը տեղադրելու հետ գրեթե միաժամանակ ՀՀ ԿԳՍՍ նախարարությունից ստացել ենք կեկտրոնային նամակ և զանգ, որ հրավիրվում ենք նախարարություն «քննարկելու դասագրքերի ստեղծման, փորձաքննության և դրանց ընթացքի ու արդյունքների վերաբերյալ հարցեր»: Խնդրել ենք, որ այս հանդիպումը կազմակերպվի հնարավորինս շուտ: Սակայն ստացված պատասխանի համաձայն՝ քանի որ փոխնախարարն արձակուրդի մեջ է, հանդիրումը կարող է տեղի ունենալ

միայն օգոստոսի 15-ին: Հանդիպմանը մենք չենք ստացել սպառիչ պատասխաններ, չենք հանդիպել նաև փորձագետի կամ փորձագետների երկրորդ խմբի անդամներին:

Ուստի որոշել ենք հանդես գալ հրապարակավ:

Եթե մեր կարծիքները, ՀՀ ԿԳՍՍ-ի կողմից չընդունված լինելով հանդերձ, ինչ որ հանգամանքներում հայտնվել են սույն դասագրքի հեղինակների ձեռքին, և դասագիրքը փոփոխված է ըստ այդմ, ապա այս երևույթն այլ կերպ անվանել, քան գրագողություն, հնարավոր չէ: Մեր այն հարցմանը, թե արդյոք նախարարությունը տրամադրել է դասագրքի հեղինակներին մեր կարծիքները, ստացել ենք բացասական պատասխան: Օգոստոսի 15-ի հանդիպմանը փոխնախարարը պարզաբանել է, որ հեղինակը ցանկություն է հայտնել ծանոթանալու նաև մեր կարծիքների հետ, սակայն նրանք նրան չեն տրամադրվել:

Վերոհիշյալից ելնելով, ունենք հետևյալ հարցադրումները.

- Մի՞թե կարելի էր ընդամենը տեխնիկական թերացման պատճառով առ ոչինչ համարել փորձագիտական, անգամ նախարարության պատասխանատուի հաստատումով՝ օբյեկտիվ կարծիքները: Կրկնենք, նախարարությունը հեղինակներին տեխնիկական թերացման մասին տեղեկացնելու համար ուներ 7 օր, ինչը բավական էր բացընդումը վերացնելու համար: Ինչո՞ւ դա չի արվել:

- Ինչո՞վ են բացատրվում մեր կարծիքներում առկա դիտողությունների և դասագրքի նոր տարբերակում տեղ գտած փոփոխությունների այդքան մեծարանակ համընկնումները: Արդյո՞ք դասագրքի հեղինակներին հասանելի չեն եղել մեր կարծիքները:


Փաստերի պարզ ժամանակագրություն և հարցադրումներ:

Բոլոր նրանք, ովքեր կցանկանան ծանոթանալ դասագրքի մեջ ուղարկված նախնական տարբերակին, ուղեցույցին և մեր փորձագիտական կարծիքներին, կարող են պահանջել ԿԳՍՍ նախարարությունից:

Հ.գ. Կարծիքները և սույն հայտարարությունը մեր կողմից արվելու արվում են բացառապես մասնագիտական և քաղաքացիական մղումներից ելնելով: Քաղաքական, աշխարհաբարական, կուսակցական, անձնական և որևէ այլ բնույթի ոչ մասնագիտական շահարկումները մեր դիրքորոշման հետ որևէ կապ չունեն:

Փորձագետներ՝ ՀՀ ԳԱԱ պատմության հաստիտուտի ավագ գիտաշխատողներ՝

Հակոբ Մուրադյան



Զոհրաբ Գևորգյան,



ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ

գիտաշխատող

Արմեն Հայրապետյան

